ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

Լ. Բազիկյանի (լիազորագիր՝ տրված 25.01.2022թ.),

քննելով «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ. ներկայացված (17.01.2022թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.01.2022թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

22.12.2021թ-ին էլեկտրոնային փոստով ստանում ենք հավելված 1.1-ի շտկման պահանջ: «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարվում են համապատասխան շտկումները և շտկված հավելված 1.1-ը 23.12.2021թ-ին ուղարկվում է պատվիրատուին:

24.12.2021թ-ին գնահատող հանձնախողովի քարտուղարի կողմից ստանում ենք թիվ 2 և թիվ 3 արձանագրությունները:

Թիվ 3 արձանագրությունով /կից ներկայացնում ենք/ գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է Հավելված 1.1 փաստաթուղթը, սակայն այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես լիարժեք ներկայացված չեն ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը, իսկ արտադրողներ սյունակում ներկայացված են այնպիսի արտադրողներ, որոնց արտադրանքը գրանցված չէ Գրանցված դեղերի պաշտոնական www pharm am կայքում:

Այսպիսով, հանձնաժողովը որոշեց. Գնահատել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1 փաստաթուղթը հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հատկանշական է, որ թիվ 3 արձանագրությունը գնահատող հանձնաժողովը կազմել է 2021 թ-ի դեկտեմբերի 23-ին, այնինչ գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ նիստ հրավիրել 2021 թ-ի դեկտեմբերի 23-ին:

Հետևաբար պատվիրատուի թիվ 3 արձանագրությունը առոչինչ է, քանի որ կազմվել է օրենքի խախտումով:

Քանի որ տվյալ արձանագրությունը հիմք է հանդիսացել նաև թիվ 4 և թիվ 5 արձանագրություններին, հետևաբար թիվ 4 և թիվ 5 արձանագրությունները ևս առոչինչ են:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով

նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը, որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշմամբ կարգավորվում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետով սահմանված ժամկետի պահպանումը պատվիրատուի պարտականությունն է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին՝

1. Չեղարկելու 23.12.2021թ. թիվ 3 արձանագրությունը,
2. Քանի որ տվյալ արձանագրությունը հիմք է հանդիսացել նաև թիվ 4 և թիվ 5 արձանագրութուններին՝ չեղարկելու նաև թիվ 4 և թիվ 5 արձանագրությունները:

Այնուհետև՝ 24.01.2022թ., բողոքի լրացմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 ծածկագրով բողոքի մեջ ներառված « Բողոք ներկայացրած անձի պահանջ» կետին, խնդրում ենք

ներկայացված պահանջը հասկանալ միայն այն չափաբաժինների մասով, որոնց համար հայտ է ներկայացրել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

Վերաբերյալ Պատվիրատուի կողմից Ձեզ ներկայացված N13, առ 18.01.2022թ.ի գրությանը, փաստենք, որ պատվիրատուն չի ընկալել մեր կողմից ներկայացված բողոքի էությունը և որպես հիմնավորում նշում է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն պատճառով որ ներկայացրել է նաև այնպիսի արտադրողներ, որոնց արտադրանքը գրանցված չի Գրանցված դեղերի պաշտոնական www. pharm.am կայքում:

Որպես հավելում նշենք, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի կողմից «էլեկտրոնային եռանակով և փակ նպատակային մոգութի ձևով հրականացվող գնումների գործընթացում օգտագործվող փաստաթոթերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին նախարարի» 03.04.2019թ. N 371-Ա հրամանով սահմանված է, որ

Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայավել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:

Հետևաբար պատվիրատուն պետք է մեկից ավել արտադրողների կողմից արտադրված ապրանքներ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչի և պայմանագրում ներառի միայն այն ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշը և արտադրողը, որոնք բավարարում են հրավերով ներկայացված պահանջներին, այլ ոչ թե մերժի ամբողջ չափաբաժինը»:

Այնուհետև՝ 01.02.2022թ., բողոքի լրացմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 ծածկագրով բողոքի մեջ ներառված « Բողոք ներկայացրած անձի պահանջ» կետին, խնդրում ենք ներկայացված պահանջը հասկանալ միայն այն չափաբաժինների մասով, որոնց համար հայտ է ներկայալրել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն, մասնավորապես՝ 1, 2, 3, 12, 17, 20, 25, 27, 28, 30, 31, 33, 34, 37, 38, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 67, 68, 70, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 81, 82, 83, 84, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107 չափաբաժինների մասով, քանի որ պատվիրատուն խախտել է շտկման համար նախատեսված մեկ աշխատանքային օր ժամկետը»

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.01.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.01.2022թ. թիվ 13 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեզ ենք ներկայացնում «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի 2021թ.-ի դեկտեմբերի 22-ի և 23-ի թիվ 2 և 3 արձանագրությունների կազմման հիմքերն ու հիմնավորումները:

«Վեդու ԲԿ» ՓԲԸ-ն 15.12.2021թ. հայտարարել է մրցույթ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 22.12.2021թ.-ին ժամը 14:00-ին էլ. Գնումների armeps.am համակարգի միջոցով: Նիստի ընթացքում պարզվել է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը չի համապատասխանում «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի պահանջներին, մասնավորապես մասնակցի կողմից լիարժեք չեն ներկայացվել ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով 04 մայիսի 2017թ.-ի N 526-ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ Հանձնաժողովը որոշել է 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և 22.12.2021թ.-ին էլեկտրոնային եղանակով Հանձնաժողովի քարտուղարի կողմից տեղեկացվել է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում կատարվել է շտկում՝ 23.12.2021թ.-ի ժամը 11:37-ին:

Այսպիսով, մեր և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից պահպանվել են Կառավարության 04 մայիսի 2017թ.-ի N 526-ն որոշման 41-րդ կետով սահմանված ժամկետները:

Այնուհետև, 23.12.2021թ.-ին ժամը 17:00-ին կայացել է հայտերի գնահատման նիստը:

Հանձնաժողովը անբավարար է գնահատել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից շտկված Հավելված 1.1 փաստաթուղթը հրավերի պահանջներին անհամապատասխան լինելու հիմքով, մասնավորապես լիարժեք չեն ներկայացվել ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը, իսկ արտադրողներ սյունակում ներկայացվել են այնպիսի արտադրողներ, որոնց արտադրանքը գրանցված չէ Գրանցված դեղերի պաշտոնական www. pharm.am կայքում:

Այսինքն, վերջինիս կողմից չի պահպանվել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և Կառավարության 02.05.2016թ.-ի թիվ 502-Ն որոշման պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժվել է:

24.12.2021թ.-ին Հանձնաժողովի քարտուղարի կողմից «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին է ուղարկվել թիվ 2 և թիվ 3 արձանագրությունները, որոնք նաև հրապարակվել են կայքում:

Ուզում եմ կրկին անգամ շեշտել, որ մեր կողմից պահպանվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման գործընթացը և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար է գնահատվել ոչ թե ՍՊԸ-ի կողմից՝ Կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված ժամկետների խախտման հիմքով (ինչպես նշված է ՍՊԸ-ի բողոքի մեջ), այլ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և Կառավարության 02.05.2016թ.-ի թիվ 502-Ն որոշման պահանջները չպահպանելու հիմքով»:

Այնուհետև՝ 27.01.2022թ, թիվ 15 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի 2021թ.-ի դեկտեմբերի 23-ի թիվ 3 արձանագրության կազմման հիմքերն ու հիմնավորումները.

Ղեկավարվելով 04 մայիսի 2017թ.-ի N 526 -ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը 2021թ. դեկտեմբերի 22-ին, ժամը 14:00-ին կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը 1 աշխատանքային օրով: Նույն օրը հանձնաժողովի քարտուղարի կողմից ծանուցվել է մասնակցին՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին, շտկել առկա անհամապատասխանությունը հրավերի պահանջների նկատմամբ մինչև կասեցման ժամկետի ավարտը:

Հաջորդ աշխատանքային օրը՝ 2021թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 11:37-ին մասնակցի՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է շտկում և քանի որ արդին ներկայացված է եղել շտկումը և ղեկավարվելով 04 մայիսի 2017թ.-ի N 526-ն Կառավարության որոշման 41-րդ

կետի պահանջներով, հանձնաժողովը աշխատանքային օրվա ավարտին, հրավիրել է հանձնաժողովի նիստ: Այսինքն կասեցման ժամկետի ավարտից հետո նոր շարունակվել է գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը:

Ուզում եմ կրկին անգամ շեշտել, որ մեր կողմից պահպանվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման գործընթացը և ընդունվել է «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը, ինչը պահանջվում էր 04 մայիսի 2017թ.-ի N 526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.01.2022թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2022/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը ներկայացված է «ՎԲԿ-ԳՀԱՊՁ-22/01» ծածկագրով հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ մասնակցի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված չէ առաջարկվող ապրանքների ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 22.12.2021թ. ժամը 15:19-ին ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ՝ ծանուցմամբ անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ սահմանելով 23.12.2021թ. մինչև 14:00-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է Հավելված 1.1 փաստաթուղթը, սակայն այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ լիարժեք ներկայացված չեն ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը, իսկ արտադրողներ սյունակում ներկայացված են այնպիսի արտադրողներ, որոնց արտադրանքը գրանցված չէ գրանցված դեղերի պաշտոնական www.pharm.am կայքում և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ջիարջի» ՍՊԸ-ի 17.01.2022թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 18.01.2022թ. թիվ 13 և 27.01.2022թ. թիվ 15 գրություններով հայտնած դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է

ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով</u>***

<u>տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>

Այսպես, «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը ներկայացված է «ՎԲԿ-ԳՀԱՊՁ-22/01» ծածկագրով հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ մասնակցի կողմից Հավելված 1.1-ով ներկայացված չէ առաջարկվող ապրանքների ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 22.12.2021թ. ժամը 15:19-ին ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ՝ ծանուցմամբ անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ սահմանելով 23.12.2021թ. մինչև 14:00-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է Հավելված 1.1 փաստաթուղթը, սակայն այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝ լիարժեք ներկայացված չեն ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը, իսկ արտադրողներ սյունակում ներկայացված են այնպիսի արտադրողներ, որոնց արտադրանքը գրանցված չէ գրանցված դեղերի պաշտոնական www.pharm.am կայքում և որոշում կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ***ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային*** տարվա, ամսվա և ***ամսաթվի*** կամ ***այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից***, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ***ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:***

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ ***Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված պահանջները, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.12.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ և ծանուցել Ընկերությանը՝ անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ սահմանելով 23.12.2021թ. մինչև 14:00-ն և 23.12.2021թ. ժամը 17:00-ին թիվ 3 արձանագրությամբ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում (մեկ աշխատանքային օր ժամկետը լրանում է 23.12.2021թ. ներառյալ) որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ, որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ՝ մեկ աշխատանքային օրը լրացած չլինելու դեպքում հրավիրելով գնահատող հանձնաժողովի նիստ և կայացնելով Ընկերության հայտը անբավարար գնահատելու վերաբերյալ որոշում:***

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ անհրաժեշտ է կիրառել Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթը՝ պահպանելով մեկ աշխատանքային օր ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 17.01.2022թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3, 4 և 5 արձանագրություններով կայացրած որոշումներն այն չափաբաժինների մասով, որոնց մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**